բազմաթիվ այլ փաստեր ցրված են նաև այլ և այլ ձեռագիր մատյանների հիշատակարաններում, «Յայսմաւուրքներում» և այլուր։ Սակայն շնորհիվ այն բանի, որ բանի ասիմիլյացիայի քաղաքականությունը վերոհիշյալ պատմական երկերում իր արտացոլումն է գտել սոսկ առանձին անհատների նկատմամբ գործադրվող բռնության և դրա հետևանքով առաջացած նահատակության փաստերի արձանագրության միջոցով, այդ աղբյուրների տվյալներով հնարավոր չէ լրիվ և ճշգրիտ պատկերացում կազմել մեր ժողովրդի ոչ-հեռավոր անցյալի պատմության կարևոր հարցերից մեկի մասին։

Բանն այն է, որ բռնի հավատափոխության նման հարկադրական ձևը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ նահատակության փաստերը, այնքան էլ ցանկալի արդյունք չէր տալիս, այլ ընդհակառակը՝ սովորաբար վերջանալով դիմադրող անձնավորության սպանությամբ, դառնում էր քրիստոնեության պրոպագանդայի մի նոր ազդակ։ Թեև պետք է նշել, որ հայ պատմիչների ու ժամանակագիրների կողմից ավելի շատ արձանագրված և ընդգծված են հատկապես այն դեպքերը, երբ հավատափոխության հարկադրանքը առիթ է տվել նոր վկայության, բայց և այնպես, հենց նույն սկզբնաղբյուրներում քիչ չեն նաև հիշատակություններ տարբեր ժամանակներում մահմեդականություն ընդունած հայերի մասին։

Սեֆյան տիրապետության շրջանում, իրանական կառավարող շրջանների ասիմիլյատորական քաղաքականության ուսումնասիրության համար շատ ավելի կոնկրետ և հարուստ նյութ են պարունակում Մատենադարանի պարսկերեն բազմաթիվ վավերագրերը, հատկապես մուսուլմանական շարիաթական փաստաթղթերն ու դանադան վճռերի կապակցությամբ հրապարակված «ֆեթվաները» (فتوى)։

«Ֆեթվա» բառացի նշանակում է «վճիռ», «որոշում»։ Ֆեթվաներ տրվում էին ինչպես կենտրոնական «Դիվան-ալ-սադարաթի» (մայրաքաղաք կրոնական ատյանի), այնպես նաև տեղական (Թավրիզի, Նախիջևանի, Երևանի) «Շարʼի» ատյանների կողմից այն դեպքերում, երբ քաղաքացիական կամ «Ուրֆի» դատարաններում նստող հաքիմները դժվարանում էին որևէ հարց վճռել և դիմում էին մուֆթիին կամ շեյխ-ուլ-իսլամին, իսկ վերջիններս ելնելով մուսուլմանական շարիաթական սկզբունքներից, տալիս էին իրենց վճիռը, որը շահի կողմից վավերացվելուց և համապատասխան մատյաններում արձանագրվելուց ու կնքվելուց հետո՝ օրենքի ուժ էր ստանում։

Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող 50-ի չափ ֆեթվաները հիմնականում վերաբերում են «զիմմի» ռայաթների (հայեր) քաղաքացիական իրավունքների, ջիզյայի վճարման որոշ մանրամասնությունների և հատկապես հայոց եկեղեցու իրավասությունների ճշտման հարցերին և չափազանց կարևոր են հայ ժողովրդի սոցիալ-իրավական վիճակի ուսումնասիրության տեսակետից։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հատկապես 17-րդ դարի այն ֆեթվաները, որոնք վերաբերում են ժառանգության հարցերին և որոնց մեջ չափազանց պարզորոշ կերպով իրենց իրավական ձևակերպումն են գտել իրանական կառավարող շրջանների և հատկապես տեղական դատական օրգանների ասիմիլյատորական ձգտումներն ու նպատակները։

Համաձայն շարիաթական օրենքի՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, որոնք վճարում էին հատուկ գլխահարկ, կամ ջիզյա,